

ԽԵՂԿԱՏԱԿՆ ՈՒ ԿՈՐԴԵԼԻՍՆ «ԼԻՐ ԱՐՔԱՅԻ ՄԵՋ»

Շեքսպիրի հանճարը անկասկած տակավին դարեր շարունակ կգրադեցնեն մարդկութիւնը: Մանավանդ XX դարու այս երկրորդ կիսուն, երբ մարդը լուսինն է հասել, Շեքսպիրի կատարելիք դերը ավելի կմեծնա, մարդիկ Շեքսպիրի գործերու մեջն կփնտրեն մարդու գոյութեան իմաստը: Որովհետև Շեքսպիր, երեսունն ավելի թատերական գործերով դիտած է մարդը բազմակողմանի երեսներով: Դիտած է մարդը զինքը շրջապատող քաղաքական, ընկերային և տնտեսական վայրիվերումների մեջն և դիտած է մարդը որպէս ամբողջութիւն մը իր ներքին հոգեբանական բարդութիւններով:

Անվիճելի իրականութիւն մըն է այսօր հոգեբանական այն իրողութիւնը, թե մարդ զույգ անձնավորութեան (double personnalité) տեր է: Մարդ ընդհանրապէս այն չէ, ինչ որ կցանկա ըլլալ և կամ իր միջավայրն ու իրմե դուրս գտնվող ամեն տեսակի ազդեցութիւններ իրեն տված են երկրորդ բնավորութիւն մը, որ այն չէ, ինչ որ կուզե ըլլալ: Ահա այսպիսի հետաքրքիր երևույթ մըն է Շեքսպիրի «Լիր արքա» ողբերգութեան մեջ գտնվող, արտաքնապէս երկու, սակայն ներքնապէս միաձուլված խեղկատակի և Կորդելիայի տիպարները:

Երբ ակնարկ մը նետենք Շեքսպիրի «Լիր արքա» թատերերգութեան վրա, մեր կենտրոնացման առարկան դարձնելով Կորդելիան և խեղկատակը, անմիջապէս կնշմարենք, թե այդ երկու տիպարները ամբողջ ողբերգութեան ընթացքին ոչ միայն իրարու չեն հանդիպիր, այլ նաև՝ երբ Կորդելիան կհեռանա բեմեն, խեղկատակն է, որ երևան կելլե և նույնպէս դործի ավարտին, երբ խեղկատակը կհեռանա բեմեն, Կորդելիան է, որ մուտք կգործե:

Բազմաթիվ քննադատներու մոտ այս երևույթը զանազան մեկնաբանություններու դուռ է բացած, ինչպես օրինակ՝ խեղկատակի հանկարծակի հեռացումը Սուիևպորն Շեքսպիրի գործին թատերական կառուցման մեկ տկարությունը կնկատե:

Բայց չէ՞ որ Շեքսպիր հանճար մըն է:

Նվ Շեքսպիրի հսկայությունը կկայանա անոր մեջ, որ ան գիտակից է գոյություն ունեցող դերիններուն, ուստի այդ դերիններուն միջեն ան կրցած է հասնիլ դրական արդյունքներու:

Շեքսպիրի մոտ ոչ մեկ բան պատահական է:

Ուստի խեղկատակի և Կորդելիայի տիպարներում երբեք իրարու դեմ առ դիման չզալու երևույթը նույնպես պատահականություն մը արդյունք չէ, այլ գոյություն ունեցող դերի մը միջեն երևան եկած հսկա իմաստի մը արտահայտությունն է:

Մեղի արդեն ծանոթ է, թե Շեքսպիրի խումբին մեջ կնոջ դերերը կկատարվեն մատղալ երիտասարդներու կողմե, որոնց ձայնը տակավին փոփոխության չէր ենթարկված, բազմաթիվ օրինակներ գոյություն ունին այդ ուղղությամբ, նույն ինքն Շեքսպիրի գործերուն մեջ:

Ուրեմն «Լիր արքայի» երեք կին դերերը՝ Գոններիլ, Ռեզան և Կորդելիա, պետք է վստահված ըլլար խումբի մատղալ երիտասարդներու և ըստ հավանականության, այն դերասանը, որ ստանձներ է Լեդի Մակբեթի դերը, խաղացել է Գոններիլ, Դեզդեմոնան՝ Ռեզանը և Օֆելիան՝ Կորդելիան, նկատի ունենալով, որ «Լիրի» և մյուս ողբերգություններու միջև ստեղծագործական տարբերությունը միայն շորս տարի է:

Արդյո՞ք 1606 թիվին Շեքսպիրի խումբին մեջ ուրիշ մատղալ երիտասարդ դերասան չէր մնացեր, որ Կորդելիան ներկայացնող դերասանը ստանձնած է նաև խեղկատակի դերը: Թերևս գոյություն ունենալով հանդերձ ուրիշ մատղալ երիտասարդներ, Շեքսպիր գիտակցաբար միայն մեկ անձի է վստահեր այդ երկու դերերը, որպեսզի թատերագույնությունը ստանա այնպիսի խոշոր ծավալ մը, որ միայն Շեքսպիրի նման հանճար մը կրնար հասնիլ:

«Լիր արքայի» լավ ընթերցումի մը ընթացքին կհասնինք այն հավանականության, թե Կորդելիայի և խեղկատակի դերակատարը նույն անձը պետք է եղած ըլլա:

Հստակ է Կորդելիայի նկարագիրը թատերագույնության մեջ: Կորդելիան իր քույրերուն՝ Գոններիլի և Ռեզանի հակապատկերն է: Եթե Գոններիլ և Ռեզան կեղծավորներ են, Կորդելիան անկեղծ է, եթե առաջինները կա-

րող են շնորհալից բառեր արտասանել, Կորդելիան սակավախոս է և չկրնար իր զգացումները բառերով արտահայտել և ճիշտ այդ պատճառով կտուժե:

Սակայն ո՞վ է հեղկատակը: Նախ հիշենք, թե Շարլ Լամպ հեղկատակը դասած է ազնիվ նկարագիրներու՝ Քենտի և Կորդելիայի կողքին: Ինչպես Կորդելիայի, նույնպես հեղկատակի խոսքերուն մեջ անկեղծութունը բացահայտ է, միայն այն տարբերությամբ, որ հեղկատակը Կորդելիայի նման սակավախոս չէ: Անցնելն առաջ Կորդելիայի և հեղկատակի նույն տիպարին տարբեր անկյուններեն դիտված ըլլալու հավանականության, ճշտենք Ստոֆորտ Պրուկ, Քոյտըն Գլարկ պնդած են, թե հեղկատակը մատուցած երիտասարդի մը երևույթը պետք է ունեցած ըլլա, որովհետև իր դիմքը ամբողջ թատերագրության ընթացքին «տղաս», «մանչ», «զավակս» կանվանելու օրինակն ահա փաստ մը ևս, որ Շեքսպիրի շրջանին հեղկատակի և Կորդելիայի դերերը հավանականորեն կատարված է նույն դերասանին կողմէ:

Հետաքրքրական է նաև այն փաստը, թե XIX դարուն բեմադրիչ Մակրեդին հեղկատակի դերը հանձնած է դերասանուհիներու, ուստի այն դերասանը, որ կարողութունը ունի իգական դերեր վերցնելու, կրնա կատարել նաև հեղկատակի դերը:

Եթե ընդունենք, թե Շեքսպիր, իր խումբի դերասանի պակասի պատճառով, կամ ոչ, այդ երկու տիպարները հանձնած է նույն դերասանին, ուրեմն իր շրջանի հանդիսատեսը անպայման տեղյակ պիտի ըլլար և գիտակցաբար պիտի ստուգեր, թե այդ երկու տիպարները կատարող դերասանը նույն անձն է: Ահա հոս կկայանա ողբերգության խորութունը. Կորդելիան հեռանալով հանդերձ իրեն, հեղկատակի տիպարով, բոլոր գործի ընթացքին, որպես Կորդելիա կրկին պիտի հետևեր իրին: Արդեն ամբողջ գործի տևողության հեղկատակը կիրը կդատուպարտե, անոր Կորդելիայի նկատմամբ գործած անարդարության համար, նույնիսկ ավելին, հեղկատակ և իր, առանց Կորդելիայի անունը արտասանելու, կմտածեն միշտ Կորդելիայի մասին: Ինչպես Մուլդոնն է ըսեր՝ հեղկատակը իրին խիղճն է:

Ճիշտ է, հեղկատակը իրին խիղճն է, սակայն այդ խղճի ձայնը ընդհանրապես երևան կուգա իրին Կորդելիայի հանդեպ գործած սխալին նկատմամբ, ուրեմն հեղկատակը իրին խիղճը ըլլալն ավելի Կորդելիայի ներկայութունն իսկ է:

հեղկատակը, առաջին մուտքին իսկ, ակնարկութուններ կրնն Կոր-

դելիայի մասին. «Այս մարդը արտաքսել է իր երկու աղջկան, իսկ երրորդին օրհնել է ակամա»:

Կա նաև այն իրողությունը, թե խեղկատակը երկրորդ արարի երրորդ տեսարանին, Լիրի բացակայության կրսն այնպիսի խոսքեր, որոնք բնդհանրապես կապ չունին Կորդելիայի հետ, նույնիսկ Պետենլ և Պրադլեյ կպնդեն, թե այդ տեսարանը Շեքսպիրի գրչին չպատկանիր: Այդ, եթե ընդունենք Պետենլի և Պրադլեյի պնդումը, ուրեմն խեղկատակի գոյության միակ իմաստավորված պատճառաբանություն կմնա Կորդելիայի ներկայությունը, հետևապես խեղկատակը անպայման Կորդելիայի տեսքը պետք է ունեցած ըլլա բեմի վրա:

Նահում Դետ 1681-ին կատարած և բեմադրած է «Լիր արքայի» մեկ տարբերակը, որ բեմերու վրա մնացել է մոտավորապես 160 տարի: Այս տարբերակին մեջ խեղկատակի դերը շնջված է, բայց ատոր փոխարեն թատերագույն վերջավորության, երբ Կորդելիա կգտնե իր հայրը՝ Լիր արքան, ոչ թե կմահանա, այլ կամուսնանա էդգարի հետ, Ֆրանսիայի արքայի փոխարեն, ու գործը կավարտի հրջանիկ վերջավորությամբ: Ուրեմն եթե Լիր պիտի ապրեր վերջնականապես զգալով զավակի մը սերը, խեղկատակի հանդեպ ունեցած իր սերը ավելորդ պիտի ըլլար, ուստի Ն. Դետի տարբերակին մեջ խեղկատակը շէր կրնար Կորդելիան փոխարինել և իր ներկայությունը ամբողջ ողբերգության ընթացքին ավելորդ կը, ուրեմն շնջված:

«Լիր արքա» ողբերգության վերջավորությունը ավելի հետաքրքրական կդառնա, երբ ընդունինք, թե Կորդելիան և խեղկատակը կատարող դերասանը նույն անձն է:

Խեղկատակի վերջին խոսքն է. «Իսկ ես կքնեմ կեսօրին»: Բազմաթիվներ մեկնաբանած են, թե այս անշան խոսքը սրտաշարժ հրածեշտ մըն է, որ կնշանակե թե՛ խեղկատակը իր կյանքի կեսին շհասած պետք է մնաք բարով ըսե: Ընդունելով հանդերձ այս բանաստեղծական մեկնաբանությունը, մենք կկարծենք, թե Շեքսպիր, նկատի ունենալով որ խեղկատակը ներկայացնող դերասանը պիտի դառնա քիչ հետո Կորդելիա, ուրեմն հասկցնել կուզե իր հանդիսատեսին, որ այլևս խեղկատակը պետք է քնանա, տեղ տալու համար Կորդելիայի մուտքին:

Շեքսպիր հանճար մըն է:

Ինչպես վերը կրսեինք, Շեքսպիրի շրջանի հանդիսատեսները գիտակից էին, թե Կորդելիայի և խեղկատակի դերակատարը նույն անձն է. ուստի Շեքսպիր, շփոթի շմատնելու համար իր հանդիսատեսները, ար-

դեն իսկ չիրի վերջին խոսքերուն մեջ հստակորեն պատահել կուզե տալ այդ իրողութիւնը:

Թատրերգութենէն գիտենք, թե Կորդելիան կախված և սպանված է, սակայն չենք գիտեր ինչպիսի մահվան մասին, բայց երբ կարդանք իրի վերջին խոսքերը, նույնիսկ եթե նախապես մեզ շփոթի մատնե, ապա կրնա մեզ հստակ պատկեր մը տալ, երբ ընդունած ենք արդեն, թե Կորդելիան և ինչպիսի կերպով ներկայացված է նույն դերասանին կողմէ: Իրի վերջին խոսքերը ըսված են՝ իր թեւերուն մեջ ունենալով Կորդելիայի անշունչ մարմինը:

Իմ ինչպիսի կերպով, կախված է: Ո՛չ, ո՛չ, չի շնչում:

Ինչո՞ւ ապրում են ձին, շունը, մուկը,

իսկ դու չես ապրում: Դու էլ ետ չես գա,

Սրբեք չես դառնա, օ՛, երբե՛ք, երբե՛ք:

Անգլիացի երեք խոշոր շեքսպիրագետներ՝ Նայտ, Պրադել և Ստոֆորտ Պրոնկ պնդած են, թե իր ենթագիտակցաբար իրար կխառնե իր երկու սիրած անձերը՝ Կորդելիան և ինչպիսի կերպով:

Այսինքն Կորդելիա և ինչպիսի նույն անձը պետք է եղած ըլլան՝ դիտված տարբեր անկյուններէ:

Բեմականորեն որքա՞ն զորավոր պիտի հնչեր, եթե իրի թեւերուն մեջ գտնվող Կորդելիայի անշունչ դեմքն ու ինչպիսի կերպով ոչ միայն իրին, այլ նաև հանդիսատեսներուն համար նույնանման ըլլար:

Եթե մեծ հավանականութեամբ Շեքսպիրի շրջանին Կորդելիայի և ինչպիսի տիպարները նույն դերասանն է կատարել, ինչո՞ւ կարելի չըլլա մտածել բեմադրական լուծում մը, ուր Կորդելիայի բեմէն հեռացումը ոչ թե ըլլա դեպի կուլիս, այլ դեպի հառաջաբեմ, ու հոն փոխե իր շորերը, հանդիսատեսներու հայացքին տակ, դառնալու համար ինչպիսի կերպով, որ մասնակից պիտի ըլլա ամբողջ ողբերգութեան ընթացքին իրի դաժան ճակատագրին:

Մասնակից պիտի ըլլա որպէս ինչպիսի—Կորդելիա, կամ Կորդելիա—ինչպիսի:

Շեքսպիր իսկապէս հանձար է: